

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1881 թ. Ֆրանսիայի Մարսել քաղաքում իտալական ազգային-ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչ Ջուզեպպե Մաձձիճին հիմնեց ժամանակի առաջադիմական կազմակերպություններից մեկը՝ «Երիտասարդ Իտալիան»: Այդ կազմակերպությանը անդամագրվեց Իտալիայի ազգային հերոս Զ. Գարիբալդին: Մաձձիճին ուզում էր ապագա հեղափոխության ընթացքում հին ու նոր սերունդների ուժերը զուգակցել, ապաստարանություն ուղիով ուղի հանել նրանց և ստեղծել համաիտալական միասնական և անկախ պետություն: Իհարկե Մաձձիճին դա չհաջողվեց, որովհետև Եվրոպայում և մասնավորապես Իտալիայում հեղափոխության հաղթանակի համար օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններ չկային: Նույն Մաձձիճին 1884 թ. հիմնադրեց ևս մի նոր կազմակերպություն՝ «Երիտասարդ Եվրոպան», որի նպատակն էր համաեվրոպական հեղափոխություն կատարել: Այդ կազմակերպության կազմի մեջ մըտնում էին «Երիտասարդ Իտալիան», «Երիտասարդ Լեհաստան», «Երիտասարդ Գերմանիան», «Երիտասարդ Ծվեյցարիան», ավելի ուշ նրանց պետք է միանային «Երիտասարդ Ֆրանսիան», «Երիտասարդ Ավստրիան», «Երիտասարդ Ռուսաստան», «Երիտասարդ Իսպանիան», «Երիտասարդ Հունաստան» և «Երիտասարդ Անգլիան» կազմակերպությունները:

Սակայն «Երիտասարդ Եվրոպան» իր գոյությունը պահպանեց ընդամենը երկու տարի: Դրան չհաջողվեց իրագործել իր նպատակը: Պարզապես 1859—1860-ական թթ. իտալական հեղափոխությունը թոթափեց Ավստրիայի ծանր լուծը և դրանով իսկ Իտալիան միավորվեց:

Մաձձիճի հիմնած «Երիտասարդ Իտալիայի» անանությանը, մոտ 28—30 տարի ուշացումով հիմնվեց «Երիտասարդ Հայաստան» գաղտնի հեղափոխական կազմակերպությունը: Նրա հիմնական նպատակն էր միավորել հայ ժողովրդի արևելահայ և արևմուտահայ հատվածները, ստեղծել անկախ և միացյալ Հայաստան:

«Երիտասարդ Հայաստան» գաղտնի հեղափոխական կազմակերպությունը որոշակի դեր է կատարել հայ հասարակական մտքի զարգացման պատմության մեջ:

Խմբակի ղեղավորող ու պարագլուխն էր հեղափոխական դեմոկրատ Միքայել Կալբանդյանը, որը ճանապարհորդել էր Եվրոպայում և կապեր հաստատել համաեվրոպական ու համապլանական հեղափոխությունների ղեկավարների հետ:

«Երիտասարդ Հայաստան» խմբակը կապեր է ունեցել Մոսկվայի և Ռուսաստանի մյուս հեղափոխական կենտրոնների հետ: Խմբակի գործուն անդամներից էին Մովսես Բուդաղյանը, Կարապետ Եզյանը, Ռաֆայել Պատկանյանը, Սարգիս Ղահրամանյանը, Ամբատ Ծախազիզյանը, Միքայել Միանարյանը, Հովհաննես Սահրուդյանը, գեներալ Սիմեոն Սուլթանյանը՝ Միքայել Կալբանդյանի մոտ ընկերը, Անանիա Սուլթանյանի հորեղբայրը: Խմբակի աշխատանքներին Ռ. Պատկանյանը փորձել է մասնակից դարձնել նաև Արեքսանդր Ղորղանյանին՝ շտաբս կապիտանին, որը չի հաջողվել: «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության աշխատանքները թուլանալորել են հայ մեծահարուստներ Մկրտիչ Սանասարյանը և ղզարցի վսճառական Հովսեփ Իզմիրյանը: «Երիտասարդ Հայաստան» խմբակը գործել է Կարապետ Եզյանի Պետերբուրգի բնակարանում: Այդ մասին Գ. Տեր-Հովհաննիսյանի (Քաջբերունի) հուշերում կարդում ենք. «Եզյանի դպրոցը և յուր բնակարանը մի հարկի տակ էին և հաճախ պատահում էին այդ տեղ ուսանողական ժողովներ՝ մասնակցությամբ նաև ոչ ուսանողների: Ժողովն ուներ Մոսկվայի ուսանողական ժողովների բնույթը, սույն է՝ խոսել հայերեն, սովորել գրականություն, սովորել հայերեն գրել... և այդ նպատակով կարդում էինք հոդվածներ, անում էին վիճաբանություններ, որ տաքանալու միջոցին փոխվում էր ռուսերենի, ինչպես լինում էր և Մոսկվայում: Երկու անգամ հանդիպել ենք նաև այդ ժողովներին, ուր տեսել ենք, քացի ուսանողներին, Եզյանին, Հովսեփ Իզմիրյանին, Միքայել Միանարյանին, Գևորգ Դողդուխյանին և այլոց»:

Խմբակի անդամները չնայած հայ հասարակական տարբեր ուղղությունների ներկա-

¹ «Արարատ» ամսագիր. Էջիփածին, 1916 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 718:

յացուցիչներ էին, բայց նրանց բողոքին միավորում էր հայրենիքի հասարակական շահը:

Խմբակի անդամներից մեկը՝ Սմբատ Ծահագիզյանը, 1864 թ. գրում է «Լեռնի վիշտը» պոեմը, ուր ակնարկներ կան Գարիբալդիի և իտալական ազատագրական շարժման մասին: Հեղինակը, բերելով իտալական և հայկական ազատագրական շարժումների օրինակը, ձրգտում էր ոգևորել հայ ժողովուրդին:

Ղազարոս Աղայանը «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշերում վկայում է, թե 1864 թվականից Պետերբուրգի «Երիտասարդ Հայաստան» խմբակի մեջ են մտել Հովսեփ Անանյանը, Ռուբեն Ջալալյանը, Գևորգ Եվանգուլյանը, Ավետիս Բաբայանը, Ղազարոս Աղայանը, Անդրեաս Արծրունին, Անանիա Սուրբանյանը, Մարտիրոս Հրաչյա Սիմոնյանը, ակադ. Աշոտ Հովհաննիսյանը դրանց թվին ավելացնում է Գր. Արծրունու, Ալ. Երիցյանի, Բ. Թավաքալյանի, Աբգ. Հովհաննիսյանի և այլոց անունները, որոնք այդքան քննարկում էին Արևմտահայաստանի ազատագրման հարցերը²:

«Երիտասարդ Հայաստան» կազմակերպության մյուս շրջանը համընկնում է 1865 թ. հունիսի 27—28-ին Թիֆլիսում տեղի ունեցած համաքարական շարժման հետ, որի գաղափարական ղեկավարներից Պետրոս Ծանջյանը (1819—1889) մասնակցել էր ֆրանսիական 1848 թ. հեղափոխությանը: Նա Թիֆլիսի համաքարական շարժման պարագլուխ Գրիգոր Իզմիրյանի ամենամոտ՝ ոչյուր:ցական տարիների ընկերն էր և խորհրդատուն: Թիֆլիսի համաքարական շարժմանը մասնակցել են ոչ միայն ուսանողության, այլև հայ և վրացի մտավորականության շատ ներկայացուցիչներ: Թվարկենք դրանցից մի քանիսի անունները Գրիգոր Իզմիրյան, «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պետրոս Սիմոնյան, Գաբրիել Խատիսյան, Համբարձում Էմֆիաճյան, բժ. Ռոտինյան, Գաբրիել Սունդուկյան, Միքայել Միանսարյան և շատ ուրիշներ:

Պետերբուրգի խմբակը իր գործունեությունն սկսել էր 1859—1860-ական թթ., ավարտել 1866 թ., Միքայել Նալբանդյանի մահով, իսկ Թիֆլիսի գործն է սկսել 1862-ից և դադարել է 1865 թ.՝ համաքարական շարժման պարտությունից հետո, երբ նրանից հեռացել է Պետրոս Ծանջյանը:

Պետերբուրգի և Թիֆլիսի խմբակներին կապող՝ օղակներ են եղել մի քանի երիտասարդներ, այդ թվում Միքայել Միանսարյանը, որը Նալբանդյանի մտերիմ ղեկավարներից մեկն էր (կազմել է «Քննարկ Հասարակական» երգարանը 1868 թ.) և Պետրոս Ծանջյանը, որոնք հաճախ էին լինում Պետերբուրգում: Տեղին է մեկ անգամ ևս անդրադարձալ խըմ-

բակի անդամներից մեկի Կարապետ Եզյանի (Դ. Յ.-ի—Հ. Ա.) պատասխանին, որը տպագրվել էր «Петербургские ведомости» պարբերականում և ուղղված էր հետևյալ Միխայիլ Կատկովի «Московские ведомости»-ում տպագրված հոդվածի դեմ: Ահա թե ինչ էր գրում Կ. Եզյանը այս առիթով. «Եվ վերջապես, ի՞նչ է գտել Կատկովը հայերի մեջ:— Լեհական պրոպագանդ և «Մանուկ Հայաստան» չէ: Սակայն այս երազատեսություն չէր, այլ, ինչպես ճիշտ նկատել էր և ռուս լրագիրը («Московские ведомости» լրագրի մասին է—Հ. Ա.), թխում է հենց «Մանուկ Հայաստանից»: Մեզ մնում է, ուրեմն, որոնել «Մանուկ Հայաստանը» Թիֆլիսում և տեսնել թե ի՞նչ տարրերից էր նա կազմված»:

Ո՞վ էր Միխայիլ Կատկովը և ի՞նչ հարաբերություն ուներ «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության հետ:

Միխայիլ Կատկովը (1818—1887) գրող և հրապարակախոս էր, 19-րդ դարի 60-ական թվականներից սկսած բանավեճի մեջ է մղւում Ի. Պանևի և Ն. Նեկրասովի հրատարակած «Սովրեմեննիկ» և «Ռուսկոյե սլովո» պարբերականների դեմ, որոնք համարվում էին մանր բուրժուազիայի արմատական ուղղության օրգաններ: Մ. Կատկովը հարձակումներ էր սկսում Ա. Գերցենի դեմ, նրան մեղադրելով հեղափոխության ընթացքում երիտասարդությանը ոտքը հանելու պրովոկացիայի մեջ³:

1868 թ., երբ սկսվեց լեհական սպառնալուծությունը, ուղղված ցարիզի դեմ, նա «Ռուսկի վեստնիկում» և «Մուսկովսկին վեդոմոստիում» սկսեց դատապարտել այդ շարժումը՝ ռեակցիոն-ազնվականության դիրքերից, հօգուտ ռուսական միապետության:

Առանձնապես ճիշտձան է, որ նա երկար ժամանակ խմբագրել է «Մուսկովսկին վեդոմոստի» լրագիրը: Լինելով գրաքննադատ, գործի թերմոսով, շատ հաճախ անդրադառնում էր նաև Ռուսական կայսրության սահմաններում ազգային-ազատագրական շարժումներին, կայսրությունից ժողովուրդների անջատման «սեպարատիստական» ձգտումներին: Միխայիլ Կատկովը ռուսական միապետական կարգի և աստիճանավորի պաշտպանության տեսանկյունից քացախատում էր Ռուսական կայսրության սահմաններում ապրող հայ, վրացի, ուկրաինացի, լեհ ժողովուրդ-

³ Տե՛ս Լեոյի «Մանուկ Հայաստան» աշխատությունը (ձեռագիր), 1952, էջ 62: Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Լեոյի անհատական արխիվ:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում Մատենադարանի արխիվի վարիչ Ծավար Սմբատյանին, որը սիրով մեզ տրամադրեց Լեոյի «Մանուկ Հայաստան» աշխատությունը:

⁴ Տե՛ս «Литературная энциклопедия», М., 1931, т. 5, էջ 161:

² «Երիտասարդ Հայաստան» խմբակի հարցերի մասին տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1988, №1, էջ 129—141:

ճերի ազգային-ազատագրական շարժումները, հակահարված տալիս ամեն մի ազգայնական ծրագրի, որով կխախտվեր ցարական միասնական կարգերի հիմքերը: Բացի այդ, նա որոշ թելերով կապված էր հայ իրականության հետ, քանակում էր Մոսկվայի Հայոց փողոցում՝ Լազարյանի տպարանի դիմացի քննարանում, քաջատեղյակ էր հայ իրականությանը, ամենամբ ծանոթ էր նշանավոր քանաստեղծ Ռաֆայել Պատկանյանի և մյուս հայ գործիչների հետ:

Այս տեսանկյունից շատ հետաքրքրական են նրա տարգրած երկու ընդարձակածավալ հոդվածները, որոնք տեղավորված են «Մոսկովսկիե վեդոմոստի» լրագրում (1865 թ. № 221—222-ում) և հիմնականում ուղղված են «Երիտասարդ Հայաստանի» գործունեությանը, ինչպես և այդ կազմակերպության գործող անդամներից մեկի՝ Գ. Է-ի (Գեորգիև Էզով—Կարապետ Եզյան—Հ. Ա.) «Պետերբուրգսկիե վեդոմոստի»-ում տպագրված հոդվածների, ինչպես նաև այդ կազմակերպության «Ինչպե՞ս կարող ենք անդամներ դառնալ» անդամների դեմ:

Կարապետ Եզյանը (1835—1895), հայ ազգային-ազատագրական շարժման ազգային-պահպանողական ուղղության ամենականավոր գործիչներից մեկն էր: Երկար ժամանակ ապրելով Ռուսաստանի մայրաքաղաք Պետերբուրգում, հիմնել էր իր մասնավոր դպրոց-պանսիոնը: Երվանդ Ծաֆազիզը ապացուցում է, որ Պետրոպավլովյան բանտում նստած ժամանակ Մ. Նալբանդյանին այցելողների թվում էր և Կարապետ Եզյանը: Վերջինս լինելով հայագիտական մի շարք ուսումնասիրությունների հեղինակ՝, թղթակցում էր «Սովրեմեննիկ»-ին, ինչպես և «Պետերբուրգսկիե վեդոմոստի» պարբերականներին: Այստեղ տպագրվում էր նրա Մ. Կատկովի «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթում հայ ազգային-ազատագրական շարժման և «Երիտասարդ Հայաստանի» դեմ ուղղված պատասխան հոդվածները: Կ. Եզյանը, դրանով բացարձակորեն չէր ծխտում «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության գոյության փաստը, այլ միայն ակնարկում էր այդ մասին:

Մ. Կատկովի՝ «Մոսկովսկիե վեդոմոստիում» տպագրած այս երկու հոդվածները 19-րդ դարի 80-ական թվականների կեսերին միակ հավաստի աղբյուրն են այդ կազմակերպության մասին: Այդ կասկածնությունը էլ հարկ ենք համարում վերլուծել Մ. Կատկովի երկու հոդվածները, որոնք բնույթով լինելով քանավիճային և միակողմանի, այնուամենայնիվ մեր լույս են սփռում հայկական արմատական կազմակերպության որոշ հարցերի վերաբերյալ:

Առաջին կարևոր հարցը վերաբերում է խմբակի գործունեության վայրին: Մ. Կատկովի հոդվածից երևում է, որ «Երիտասարդ Հայաստան» կազմակերպությունը գործել է ոչ թե Մոսկվայում, այլ Պետերբուրգում: Դրա համար

կովան է ծառայում Մ. Կատկովի այն արտահայտությունը, որ «ոչ բազմաքանակ երիտասարդության մի մասը, որը գլխավորապես ապրում է Պետերբուրգում, կամ այնտեղից է ներշնչանք ստանում...»: Այս մի քանի տողերը իրոք ցույց են տալիս «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության գոյության հարցը, որ նրա հիմնադրման կենտրոնը՝ Պետերբուրգն է եղել: «Գ. Է-ն հաստատում է,— գրում է Մ. Կատկովը,— որ այդպիսի երիտասարդ մարդիկ գոյություն չունեն...: Մենք մտածում ենք այնուամենայնիվ, որ նրանք կան, և մեզ հանձնվել Գ. Է-ին պետք չէ, դատելով նրա տոնից, ինքը հեռու չէ «Երիտասարդ Հայաստանից»: Մ. Կատկովը շեշտում է, որ «Երիտասարդ Հայաստան» անունը իր կողմից հնարովի չէ...»: «Մամուլում,— գրում էր նուս հրապարակախոսը,— մենք առաջին անգամ հանդիպել ենք «հիդայի թերթում»»:

Կ. Եզյանը, որպեսզի քողարկի և հերքի «Երիտասարդ Հայաստանի» գոյության փաստը, մշուշապատ ձևով է ներկայացնում խմբակի գործունեությունը, իսկ դրա փոխարեն առաջին պլան է մղում հայոց լեզվի ուսուցման հարցը, որը ունակարկած էր ցարական Ռուսաստանում: Կ. Եզյանը օրինակներ է բերում այն մասին, որ չնայած պատմության ընթացքում հայերը հավատարիմ են եղել ռուսներին և Ռուսաստանին, սակայն Ռուսաստանում բացվել են անգամ գերմանական դպրոցներ, սակայն հայոց լեզուն արհամարհված է և այնտեղ ապրող հայ երեխաները չեն տիրապետում իրենց մայրենի լեզվին: Այս օտիթով մի բանավեճ է սկսվում Մ. Կատկովի և Կ. Եզյանի միջև: Մ. Կատկովը մատնանշում է Թեոդոսիայի Խալիբյան դպրոցը, որտեղ ուսուցումը տարվում է հայերեն լեզվով: Նա գրում է նաև այն մասին, որ Ռուսաստանում ծնողների հանձնարարությունը կարող են անգամ չհնարեն դպրոցներ հիմնել և սովորեցնել երեխաներին չհնարեն:

Որոշ տարակարծություն էր առաջ եկել «Մամուկ Հայաստան» անվան շուրջը: Ոմանք բանավոր վեճերի և գրույցների ժամանակ, այն կարծիքն են հայտնել, որ «Երիտասարդ Հայաստանը» ոչ մի կապ չունի «Մամուկ Հայաստան» կազմակերպության հետ: Այս առիթով մերից դիմենք նուս հրապարակախոս Մ. Կատկովի հոդվածներին: Նա շեշտում է. «Այդ «Երիտասարդ Հայաստանը» (ըստ Մ. Կատկովի «Մամուկ Հայաստանը»— Հ. Ա.) չունի, բուն Հայաստանում, ոչ տուն, ոչ կացարան»: Այս փաստը մախ ճշտում է, որ «Երիտասարդ» և «Մամուկ» անունները նույն իմաստն ունեն

⁵ «Московские ведомости», 1865, № 222.

⁶ Նույն տեղում.

⁷ Նույն տեղում.

⁸ Նույն տեղում.

⁹ Նույն տեղում, հոկտեմբերի 12, 1865 թ., № 222:

և երկրորդ՝ իրոք բուն Հայաստանում ո՛չ տուն և ո՛չ էլ տեղ ունի այդ խմբակը: Մ. Կատկովը այդ առիթով բերում է Գամառ-Քաթիպայի «Մանուկ Հայաստան» քանաստեղծությունը, որտեղ հայրենասիրական կոչ էր արվում «արյան վերջին կաթիլը» տալ հայրենիքի ազա-: ոսգրմանը:

Հարավ, հյուսիսն փռչի վերացավ...

Ձայն, տրոփ, խոսք շքուկ զի-զի

ըսվեցավ...

Մասա ճակատեն մեզը հետացավ...

Մանուկ Հայաստան ոտքի կայնեցավ...¹⁰

Բանաստեղծության այս մի քանի տողերը խորհրդանշում են «Ճշմարիտ լույսի տակ» «Երիտասարդ Հայաստանի» իսկական դեմ-քը, — եզրակացնում է ռուս հրապարակախոսը:

«Երիտասարդ Հայաստան» խմբակը իր աշ-խատանքներն սկսելով 1859—1860-ական թվականներին, այն ավարտել է 1865—1866-ական թվականներին: Ժամանակին նույն տե-սակետն է պաշտպանել մեծանուն պատմաբան Լեոն: Նա գաղտնի խմբակի հիմնման առի-թով գրում էր. «Վարծուս ենք, որ ինքը կազ-մակերպությունն էլ պիտի ձևավորված լինի 1860 թվականի սկզբներում, բե ինչպես և ինչ տարրերի մասնակցությամբ, — մենք տարա-բախտաբար չգիտենք»¹¹: Ինչպես տեսնում ենք խմբակի հիմնման թվականի վերաբերյալ քա-նավեճի կարիք չկա, և Լեոն էլ համակարծիք է խմբակի հիմնական թվականի հետ:

«Երիտասարդ Հայաստան» կազմակերպու-թյան համար խորհրդանշ է հանդիսացել Փա-րիզում ժանհիկ Աբամյանի տպարանում տա-գրված «Մայր Հայաստանի» պատկերը: «Մո-տավորապես նույն ժամանակ, — գրում է Լեոն, — հասնեայն դեպս 1860 թվականներից ոչ ուշ, Փարիզում հրատարակվեց և այդ իրենավ պատկերացնող մի նկար — մի կին, ավերակների մեջ նստած, մի ձեռքով ցույց է տալիս հեռուն, իսկ մյուս ձեռքով գրկած ունի իր մոտ կանգնած և նույն ուղղությամբ հա-յացքը հառած տղա երեխային: Այս նկարը շատ տարածված էր և ամեն տեղ նրան ան-վանում էին «Մանուկ Հայաստան»¹²: Նույն բանը հաստատում է և ռուս հրապարակախո-սը: «Ինչպե՞ս քաջատրեյ, — գրում է Մ. Կատ-կովը, — որ ուրիշ խմբակների մեջ հավանու-թյուն է գտել Փարիզում տպված և այնտեղից Մոսկվա բերված «Երիտասարդ Հայաստան» նկարը, ներկայացված իր քաղաքների ավե-րակների վրա ոչքացող կնոջ կերպարանով: Չէ՞ որ գուր չէ, որ երիտասարդ հայերը իրենց ազգանունների ով վերջավորությունները որոշ ժամանակից ի վեր սկսել են յանցի վերածել և

պահպանել այդ ձևը նույնիսկ ռուսերեն ստո-րագրելիս:

Կարող են ասել, թե այդ ամենը մանր, դա-տարկ բաներ են, որոնց մասին խոսել չար-ծե: Բայց ինչու՞ դատարկ այդ բաները չկա-լին տալը տարի առաջ, երևացին միայն այն ժամանակ, երբ մարդկանց գլուխները ըս-կընցեցին պիտույն գալ Ռուսաստանի ազգային մասնատման անմիտ ուսմունքից, երբ սկիզբ առան զուտ լեհական, լեհ-ռուսական, ուկրա-ինոֆիլական և այլ ցույցերը»¹³:

Հայ ազգային-ազատագրական շարժման վրա որոշակի ազդեցություն է թողել և լեհա-կան շարժումը: Մեզ է հասել Հայաստանի ազատագրման վերաբերյալ մի փաստաթուղթ: Հայաստանի ազատագրման վերաբերյալ ծրա-գիր-նամակը 1868 թ. հոկտեմբերի 21-ին Հոռ-մից ուղարկել է Պարտասար Նորատունկյանը հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին¹⁴:

Արևմտյան Հայաստանի ազատագրման վե-րաբերյալ կազմած ծրագիրը հետաքրքրական է նրանով, որ նա առաջարկում էր ստեղծել «եռյակների» (զորքի—Ն. Ա.) այն համակար-գը, որ գործադրվում էր Լեհաստանի ապըս-տամբության ժամանակ, ինչպես նաև հայ-լեհական զինակցությունը: Պ. Նորատունկյանը այսպիսի մտադրություն է ունեցել. «Պոլստ մեջ խումբ մը մարդիկ զինելով Բարձր Հայաստան երթալ, հոն այս պզտի խումբն Հայ ու Քյուրտ քաջամարտիկներով զորացնել և անմիջապես Ռուսիո Հայաստանն ու Վրաստանն արշավել, հետո գավառներուն բնակչաց սիրուն իրենց գրավել, որով ընդհանուր հեղափոխության մեջ տեղի տալով՝ Ռուսիո Լեհաստանի վրա թափած սուկալի հուրն տկարացնել, ստիպե-լով զինքն յուր գորացը մեկ մեծ մասն հոն վերադարձնելու»¹⁵:

Պ. Նորատունկյանի հույ-լեհական զինական ծրագիրը նպատակ է ունեցել «Հայաստանի շղթաները խորտակել»:

Կ. Պոլսում «Բարեգործական ընկերու-թյան» ատենադպրոց Մկրտիչ Պեշիկաշյանը և Պ. Նորատունկյանը հանդիպել են հակա-ցարական տրամադրություններով օժտված Արամ Չարտորիծակու հետ: Սակայն Չարտո-րիծակու ծրագիրը հայ գործիչների կողմից հավանության չի արժանացել: Վերջիններս ավելի շատ մտածել են Արևմտյան Հայաստա-նի ազատագրության մասին, քանի որ նրանք չեն ընդունել եվրոպական երկրների և մասնա-վորապես Ֆրանսիայի օժանդակությունը:

Պ. Նորատունկյանը իրավացի էր, երբ ազ-գի փրկությունը փնտրում էր ապավինելով միայն նրա սեփական ուժերին: Պ. Նորա-տունկյանի երիտասարդ տարիքում մահը,

¹⁰ Ռ. Գատկանյան, Երկեր, Եր., 1955, էջ 129:

¹¹ Լեոնի անհատական արխիվ, (ձեռա-գիր), 1932, էջ 82:

¹² Նույն տեղում, էջ 1:

¹³ «Московскѣе ведомостѣ», 1865, № 222.

¹⁴ «Դիվան Հայոց պատմության», գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 55—56:

¹⁵ Նույն տեղում:

ինչպես և թուրքական բռնապետական կարգը թույլ չտվեցին, որպեսզի ծրագիրը գործնականում կիրառվի:

Լեոն Աույն կարծիքին էր. «Ամենից խոր և խիստ ազդեցություն հայ ուսանողական մտքի վրա գործել է լեհական շարժումը»¹⁰: Լեոն գրում էր, որ դրա ցայտուն օրինակը Մ. Նալբանդյանի հարաբերությունների հարցն էր լեհերի հետ: «Փարիզը միայն իտալական ազատագրության արձագանքներով չէր լցված, այլև շարունակում էր մնալ լեհական ազատության պրոպագանդի մեծագույն կենտրոն: Նալբանդյանը հարաբերությունների մեջ էր մտնում այդ պրոպագանդի հետ, որ պատրաստել էր արդեն խոշոր շարժումներ վարչական և վերադառնում էր Պետերբուրգ երկու ոտանավորներով, որոնց վիճակվում էր մեծ հռչակ. մեկն «Ազատ Աստվածն» էր, մյուսը Իտալիայի ազատագրական պատերազմի փառաբանությունը— «Մեր հայրենիք»: Այսպես էր, անշուշտ, «Մանուկ Հայաստանի» նախապատրաստական շրջանը»¹⁷:

Մ. Նալբանդյանը աշխատել է ստեղծել պատմական Հայաստանի մի քարտեզ: Հավանաբար քարտեզը պետք է տպագրվեր Փարիզի Եմանիկ Արամյանի տպարանում: «Հյուսիսափայլ» ամսագրի 1860 թ. № 5-ում տպագրված հայտարարությունից երևում է, որ «Երիտասարդ Հայաստանը» սկսեց է ընդգրկել Ռիոն և Քուռ գետերից մինչև Միչերկրական ծովի արևելյան հարավային եզրը, մինչև Ալեքսանդրեաի ծովախորշը: Սակայն քարտեզը թանկ է ելավել, փոխգնդապետ Ծվարյովի հաշվումների համաձայն այն պետք է կազմեր 7000 ռուբլի արծաթ փողով, որի հետևանքով էլ գործը կարծես թե կհաստ է մնացել:

Հետաքրքրական է հայ լուսավորական շարժման նշանավոր դեմքերից մեկի՝ Ստեփանոս Նազարյանի գնահատական-կարծիքը Մ. Կատկովի հրատարակած «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթի մասին: «1865 թ. Նալբանդյանին գրած մի նամակում անդրադառնալով թերթի մեզ ծանոթ հոդվածին, ուր խոսվում էր հայերի, վրացիների և թուրքերի «սեպարատիստական» ձգտումների մասին, Նազարյանցը բնորոշում էր թերթի ելույթը որպես Կատկովի փոքրոգության անճոռնի և հիմարական արտահայտություն: «Ողորմելին չգիտեմ,— գրում էր նա,— որ եթե այդ տգետ և թույլ ազգերին թագավորություն ևս քաշխեիր, ինքյանք պիտի իսկույն հրաժարվեին դոցանից, կամ եթե հիմարությանը հաճն առնեն» ինքյանք պիտի միմյանց միս ուտեին, ինքյանք յուրյանց գազանական զենքով և անմիաբանությանը կործանեին յուրյանց անձր»¹⁸:

Հետևաբար հայ առաջադեմ մտածողներից ոչ մեկը չի ընդունել Մ. Կատկովի պրոպագանդան տեսակետները հայ ազգային-ազատագրական շարժումների և հատկապես հայերի սեպարատիստական ձգտումների վերաբերյալ:

Զեյթունի ապստամբության ավարտից հետո, «Երիտասարդ Հայաստան» խմբակի գործունեության վերաբերյալ ուշագրավ են նաև հայ հարուստներից մեկի Խրիստ. Լազարևի խորհրդածությունները. «Որպիսի՜ անմիացնորք, որպիսի՜ հիմար ցնդաբանություն. Երիտասարդ Հայաստան անվան տակ երևակայել անգամ ինչո՞ք ֆանտաստիկ Կիլիկիայում անհնարին մի ազատություն և մարմնից, հոգուց և կյանքից զրկված, մեռած ոք ավերված Հայաստանի վերածնունդ»¹⁹:

Մ. Կատկովի մահվանից հետո «Մոսկովսկիե վեդոմոստի» պարբերականի խմբագրությունը նշելով նրա առավելությունները՝ «յուր խոսքի ուժով և ազդեցությամբ», փորձ է արել համեմատել նրան Ա. Պուշկինի հետ և գրել է, որ նրա արձանը պետք է կանգնեցնել Ստրաստոնյ բուլվարում, Պուշկինի արձանի հանդեպ: Դրա դեմ բողոքել է ավելի առաջադիմական դիրքերում գտնվող «Вестник Европы» ամսագիրը:

Ուշագրավ են նաև 1867 թ. «Արձագանքում» Մ. Կատկովի մասին տպագրված տողերը. Ի՞նչ է Կատկովը այժմս այլազգիների համար և ի՞նչ կըլինի նա նրանց համար, երբ նրանց կիմանան, թե ինչպես էր վերաքերվում դեպի ամեն ինչ, որ ռուսական չէ»²⁰: Եվ այս իմաստով «Արձագանքում» տպագրված հոդվածում հակադրվում են Ա. Պուշկինը և Մ. Կատկովը, ցույց է տրվում նրանց հակասական քննադատումը: «Պուշկինի հավաստիացումը, թե «իմքը» երկար ժամանակ ժողովրդին սիրելի կըլինի» ինչի վրա է հիմնված:— Գրում էր սարքերականը:— Նորա վրա, որ նա յուր քնարով զարթեցնում էր մարդոց մեջ բարի զգացումներ, խիստ դարձում գովաբանում էր ազատությունը, և ողորմածության էր հրավիրում դեպի ընկածները»²¹:

Մ. Կատկովի գործունեությունը սրան ճիշտ հակապատկերն է. նա թշնամություն և չարություն էր գրգռում, հալածում էր ընկածներին և ատում էր ազատությունը—և ատում էր այնպիսի ուժով, որքան երբեմն երկրպագում էր նրան»²²:

Եվ կարծես պատմական դեպքերը կրկնվում էին: 19-րդ դարի վերջին «Մոսկովսկիե վեդոմոստի» պարբերականը մորից հանդես էր գալիս փոքր ազգությունների սեպարատիստական ձգտումների դեմ, հատկապես որ հայերը հետևում են լեհերի օրինակին, հա-

¹⁰ Լեոնի անհատական արխիվ, էջ 45:

¹⁷ Նույն տեղում, էջ 62:

¹⁸ Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Եր., 1956, գ. 2, էջ 84—85:

¹⁹ Մ. Նալբանդյան, Անսիպ երկեր, Երևան-Մոսկով, 1935, էջ 522:

²⁰ «Արձագանք», 1867, № 81:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

կահարված էր տալիս, «Պետերբուրգսկիե վեդոմոստի» պարբերականի հոդվածին, որի հեղինակն էր «Գրածիանին» գրական կեղծանունով Ռ-ն: Մարզո Մխիթարյանը այն կարծիքն է հայտնել, որ Ռ-ն ճույն Կ. Եզյանն է: «Թվում է,— գրում է Մ. Մխիթարյանը,— թե 1897-ին Առյուծակա Պ կեղծանունով Եզյանն էր խտանվում գործին,, փորձելով հայերից հեռացնել նրանց վրա բարդված այն ծանր քաղաքական մեղադրանքը, որը ոչ մի հիմք չուներ: Նա ակնհայտորեն ջանում էր մեղադրանքից ազատել և հայ մամուլը, որի անարգել գործունեության մեջ շահագրգռված էր»²³:

²³ Մ. Մխիթարյան, XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Եր., 1976, էջ 468:

Տեղին է Մ. Մխիթարյանի կաժխատեւումը և հավաստի: Այդ տարիներին Կ. Եզյանը մեծ փորձ էր կուտակել և դրական գործ էր կատարում հայ հասարակական մտքի զարգացման ուղղությամբ:

«Երիտասարդ Հայաստան» կազմակերպության մասին քերված նոր նյութերը, Մ. Կատկուփի երկու հոդվածը և թե՛ Լեոյի նորահայտ աշխատություննից քերված փաստերը մեկ անգամ ևս ապացուցում են թե ինչ գործունեություն է ծավալել և ինչ ոլորտներ է ընդգրկել խմբակը:

Հ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆ